



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4568

ՀՈՎՐ - ԴԱՎ - ԸՆԿՐ




Բագու
1903

993




ՀԱՅԻՒՄ-ԴԱ-ԼՈՒՄ

(Քրդական սլուժմա)



Ավ. Տիտիտ պ դ ե տ ն ց ի.

(Արտասահ, «Սուրճ» ամսագրից, 1894 թ.)



Հ Ա Վ Ա Կ

Բ Ա Գ Ա Կ
Տ Պ Ա Ր Ա Ն Ա Ա Ր Ա Ր Ա
1 9 0 3.

891.995

30

Գ-31 ԱՅ

ԼՐԻՒԹ-ԴԱ-ԼՐԻՒԹ

(Քրդական պօէմա)

Ա. Փափառեանցին

(Արտասով. «Սուրբ» ամսագրից, 1894 թ.)

Բ Ա Գ Ա Ի
Տ Պ Ա Շ Ա Կ Ա Վ Ո Ռ Ա
1 9 0 3.

3933
5183

ԳԱՅԻ-ՄԻ-ԳՈՅՈՒ

(ակ)օր մայիսի

առ ու գրքի պատճեն է

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Июля 1903 г.



1 591
43

ԼՈՒԿՐ-ԴԱ-ԼՈՒԿՐ

Բրդական պոլամ

Տիպարին և

Այստեղ - Սև ջրի շրնակ եղբրներումն էր, որ ապրում էր Հասօն։ Երկրի սիրանե իքաջ պատահին էր նա։ Ոչ մի մարդ նրան չէր կարող զինաթափ անել։ Սատղակը սիրտ չուներ նրա հօտի շուրջը ման զալ և ոչ խիկ գայլը ոչխարի կողքին քարշ զալ։ Հասօն որբան որ բարի էր դէպի լաւը, այսքան էլ անկում էր դէպի շարը։

Սիրուն էր Հասօն նոր ծավոլ արեի պէս շրնակ։ Երկրի աղջիկների խելքը դնում էր նրան տեսնելիս։ Հաղա նրա նուագելլը։ Նրա փողական հանած ձայները կարեի էր որ հրեշ-

տակներն ունենային, այդքան զրաւիչ, այդքան սիրայոյդ: Չայներ, որոնք հոսում էին մելամազմակի, կլլուսմ էին որպէս հեղիկ վտակ և զայլայլում որպէս սիրահար սոխակ:

Մարդ թէ անասուն, այդ ձայնը լսելիս, ակամայ մօտ էին զալիս, քարանում ու աշխատում էին չկորցնել ոչ մի խազը, ոչ մի զեղգելաները:

Նստում էր Հասօն ժայռերի զլսին, աշքերը ուղղած լայն հորիզոնին. Սև ջուրը զալարապտոյտ ստքերի տակին, զղղուն զեփիւոք խաղում ճակատին...

Եւ նա ածում էր*

Պէտք էր տեսնել թէ ինչպէս զամփոները զլսիմները թաթերի վրայ, աշքերը սրնզին, դառնապէս լալիս կնձկնձում էին:

Պէտք էր տեսնել թէ ինչպէս ոչխարներն այն անմիտ մոռանում էին ուտելը ու մօտ զալիս:

Հասօն քարերին էր զովացնում, Սև ջրի ալիքները յուղում: Բնութիւնն էր քարացնում, զեփիւոքն ողբացնում: ամեն ինչ շարժում ու հրեշտակների նախանձը զուգում:

Այդպէս էր Հասօն:

Էլ ինչպէս ոչխարները չհաղանգէին սրնզի ձայնին:

Ի՞րը չէր շարժում, ոչխարներին նւազով կանչում էր կտղին;

Սրածացնելու համար «Քէրիկ»-ը, ջրելու համար «Խօղաթ»-ը և հեղ անասուններին իր շուրջը ժաղվելու համար ածում էր «Ոչխարի կոշը»:

Ոչխարները լսելուն պէս թողնում էին ամեն ինչ, անցնում ամեն բան, զալիս Հասօն շուրջը հաւաքւում:

Սպրում էր Հասօն այսպէս երջանիկ, հեռու մարդկանցից, բնութեան զրկում, լեռների կրծքում: Երջանիկ էր նա որպէս մի իշխան, սիրւած իր հօտից և նիրսած իր երգերին:

II.

Մի օր Հասօն տեսաւ աղայի միակ աղջկան. Տեսաւ ու սիրահարեց:

Սիրուն էր Զալիմն: Կախարդիչ աշքերը, սալի էր բոյը, կամար՝ ունքերը, զողարիկ՝ թշերը:

Զալիմն էլ տեսաւ Հասօնն. Զալիմն էլ սիրեց Հասօնն:

Տիսրեց Հասօն։ Կորցրեց աշխուժաթիւն, կորցրեց զարժութիւն։ Օրերայի պայոյտ էր պալիս մեծ պալատի շուրջը, թէկազ աշխարհ այնտեղ էլ ուտելու խռո չգտնէր Աշք աշտարակին, նւազում էր ախրակին, ուիստը սրնդի մէջ զնում ու արտառում։

Զալիսէն էլ տանջում էր։ Թագնեած լուսամուտի հսկում, նաև աշքը չէր հեռացնում Հասօնց, ականջը՝ նրա նւազից։ Մէջ ուստու՞ էր և աչ էլ խոսմ ատանջում էր միայն։

Երկուսն էլ զիտէին որ շատ ճեռու են միմեանցից, որ աղայի պաշտիկը չորանի կին չի լինի։

Բայց սէրը Սոստոյ կրակն է, շատ զօրեղ կրակ։ Նա կտրում—անցնում է, ամեն հեռաւորութիւն, թափանցում ամեն խռութիւն։

Սէրը աչ հեռաւորութիւն է ճահաշում, ոչ էլ խռութիւն։

XXX.

Հեռածես էր աղան ու խիստ խորամանկ, Շուտով նկատեց նա Հասօն սէրը։ Բարկացաւ, կատաղեց, ուզեց սպանել յանդուգն չոբանին,

բայց խոհեմ էր։ Չ'ուզեց իր տան անունը կոտրել յաւիտեան ու մի չորանի արիւնը մտնել ընդունայն։

Բայց ինչ կատէին եթէ իմանային որ մի չորան նրա աղջկայ ետեիցն էր ընկել։ Պէտք էր Հասօնին հեռացնել։ Հեռացնել ինքնակամ զոհ խորամանկութեան։ Պէտք էր այնայն մի խաղ սարքել, որ Հասօն մողնէր ինքը հեռանար ու մէկ և այդ կողմերը չկառնար։

Մտածեց աղան, երկար մտածեց ու գտաւ հնարք։ Մարդ ուզարկեց, կանչեց Հասօն ու ասաց նրան։

«Գիտեմ, Հասօն, ասաց շար աղան—պիտեմ, որ սիրում ես իմ աղջկան։ Գու քաջ տղայ ես։ Ծիլ իմ լաւ սրինդ էլ ածում ես։ Աղջկա քեզ կը տամ, միայն կը զնեմ մի պայման։ Լսել եմ որ ոչխարները քեզ հնազանդում են ու սրնդիդ ձայնից գրավւած քեզ մօտ գալիս են։

«Գետնից մինչեւ այդ բարձր աշտարակը — տեսնում ես նրան—գնել կը տամ փայտեայ սանդուխտը. զու կը նստես այնտեղ—բարձրում, սխարներդ կը ժողովին ցածրում։ Ահա պայմանի։ Եթէ զու բարձրից, սրինդդ ածելով, կարողացար ոչխարներին սանդուխտի

վրայովի քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ
աղջիկս քեզ հալալ, առ ու վայելիր:

«Սպա թէ ո՞չ խայտառակ եղիր, ինչ ու-
նիս-չ'ունիս հաւաքիր և քանի շուտ է՝ այս
կողմերից հեռացիր: Մի շորան՝ աղայի փեսայ
չի լինիլ—այդ էլ խելքիցդ հանիր»:

Հասօն ժպտեց, խոր զլուխ տւեց, «Տէր
ես աղա—ասաց—ասածիդ համաձայն եմ»:

ՏՎ.

Եինել տւեց աղան փայտեայ սանդուխ-
տը:— Խնիսուն և ինն աստիճան ունէր նա:—
Հասօից ծածուկ կոտրեց նրա մէջ տեղի մի
աստիճանը. կոտրածը թոյլ կերպով զրեց
իր տեղը այնպէս, որ ոչինչ չէր երկում, բայց
մի թոյլ սեղմում հերիք կը լինէր փայտը ձգե-
լու, և մի աստիճանից գէափի միւրը՝ մի արշի-
նաշափ տեղ բաց թողնելու. այլախով էլ ոշ-
խարների անցնելը անհնար դարձնելու:

Օ, շար էր աղան. հպարտ էր հպարտ...
Այդ խարդախութիւնը արեց շար աղան: Հա-
սօին աշտարակի ծայրը հանեց, Զալիսէին պա-
տըշգամիթի վրայ ու ասաց շորանին: «Սհա-

Զալիսէն, խրախուսւիր, հալալ է քեզ նա, թէ
ասածս արիր»:

Զալիսէն տեսաւ Հասօին, ժպտեց նրան,
կարմրեց ու նշան արաւ. Խմացաւ շորանը որ
Զալիսէն էլ սիրում էր իրեն: Սիրոն ուրախու-
թիւնով լցւեց: Առաւ սրինզպ, բերանին դրեց,
քէօլողը ծուեց ու նւագն սկսեց:

Թնդաց սար ու ձոր, շարժեեցին ծառեր,
զուղացին բարեր. յուզւեց շար աղան, խելայեղ
Զալիսէն. քիչ մնաց թռնէր ցած ու դնար ոշ-
խարի պէս ընկնէր Հասօի ոտքերին:

Շարժւեցին ոշխարները, մօտեցան սան-
դուխտին ու սկսեցին միմեանց հտերից բարձ-
րանալ աշտարակն ի վեր:

Վ.

Լօ, լօ, լօ Հասօ, Սե-ջրի շորան, սար ու
ձոր մղկտացնող զիւան. զազան մեղմացնող,
քար ու ծառ յուզող շորան: Խնչու յիմարի պէս
հաւատացիր աղային, Ինչն բարձրացար ծայրը
աշտարակի: Զուր դառնայիր մօրդ փորում,
Հասօ: Երանի շմտնէիր այս աշխարհը որ լին
է աղաներով: Երանի շտեսնէիր արկի փայլը

որ քեզ այսից խորովեց, Սկ զսի ալիքները որ
քեզ տրորեց. չամբի օրօրւելը, որ քեզ կա-
խարդեց: Լօ, լօ... միթէ կրմանը¹⁾ այն-
քան նամէրդ²⁾ եղաւ, որ սէրը ծաղրեց: Վի-
թէ նրա խիզճի կորաւ. Աստւածը մոռցաւ:
Խեղճ Հասօնի ինչու Շլթանի բաժին արաւ,
աշխարհը լացի ու ոռոգի մէջ դրաւ... լօ, լօ...

Հա բարձրանում էին աշխարհները, հրում
միմեանց: Սրնզի ձայնից դիւթւած մոռանում
էին իրանց տակի անգուստը: Աշքերը Հասօնի
ուղղած, բարձրանում էին:

Աշխարհը զմալած զիտում էր: Զար ա-
ղան բար էր կտրել: Իսկ Զալիսէն մինչև կէս
մէջը կոացել: ձեռները Հասօնի էլ պարզել
ու գոչում էր.

—«Ես քոնն եմ, Հառօ, քոնը յաւիտեան:
—Ես քեզ սիրում եմ. այնքան եմ սիրում, որ-
քան չէր սիրում Լէլլան՝ Մէջլանին: —Ես քեզ
սիրում եմ. այնքան եմ սիրում, սրբան չէ սի-
րում թիթեռը ճրագին, սոխակը՝ վարդին, աշ-
խարհն՝ արեին ու բոյսը՝ հողին.»

«Դու ես իմ ճրագը, դու ես իմ վարդը.
դու իմ արեն ու դու իմ հողը...»

Լսում էր Հասօն, սիրալ խշիշում: Ածում
էր, ածում, նւազը ուժովցնում:

Եւ ոչխանները բարձրանում էին, շարուվ
բարձրանում:

Ներկայական աշխարհ առաջ առաջ ըստ
ունի մայ մայն զբանը բազով սժնոփ
ուր այսու ին ։ **ՎԻ** առաջ արք սազ, ուս
ուս ու զամբ ու զամբ իրազը իւնչը ըստ

Հասաւ նէրի¹⁾ այծը կստրած աստիճա-
նին: Զդաց ոլ մահը առցին է, բայց զիւթ-
ւած էր—ստրը գրեց վայտի վրայ:

Շարժուեց վայտը. լուեց մի մային և
սիրուն նէրին պտոյտ զործելով օդի մէջ զնաց
զալոցախւելու անգունդի բարերի վրայ:

Մղկտաց Հասօն: —«Հէյ վախ, իմ սիրուն-
նէրից կանչեց սրտարագիս. բայց աշըը երբ
Զալիսէին ընկաւ, մոռցաւ նէրին: Սրինզը
գրեց բերնին ու սկսեց ածել:

Աշխարհները տեսան նէրու զրութիւնը,
կանգ առին, մտածեցին ետ զնալ, բայց
զիւթւած էին, առաջ զնացին:

Փարձեց առաջին ոչխարը, ետ ետ քաշ-
ւեց, առջիի ոտքերը բարձրացրեց և ուղեց

¹⁾ Քիւրդ.

²⁾ Անազնիւ, ամուրցիւ

¹⁾ Յուաչնորդող ալձ:

թոնել:—Մի մայիսն արձակեց և զնաց այծի ետևից:

— «Վախ, վախ, իմ անմեղ ոչխար, մղկըտաց Հասօն: Նայեց Զալիսէին, մոռցաւ ոչխարին, ոյժ տւաւ «փող»ին:

Փորձեց երրորդ ոչխարը, մինչև իսկ թրռաւ, բայց կպաւ աստիճանին, մի պտոյտ գործեց, խղճուկ կերպով մայեց ու զնաց գէպի խոր անգունդը:

— «Թռէք, անցէք իմ սիրուն ոչխարներ—երգեց Հասօն—թռէք իմ թաւամաղ զառնուկներ, եկէք ձեր տիրոջ մօտ»:

Ոչխարներն էլ չէին շարժում: ետ ետ էին գնում:

Կատաղեց Հասօն—բացւածքը չէր տեսնում—որչափ սէր ունէր ու զգացմունք, ներշընչեց սրնզին. զեղզեղանքներով քարացրեց բնութիւննը... բայց ոչխարները ետ ետ էին գնում:

Սմաշեց աղան իր զործից, կիսամեռ հղաւ Զալիսէն յուսահատութիւնից:

Փոխեց Հասօն եղանակիր:

Այժմ ինքն էլ չգիտէր ինչ էր ածածը:

Դադրել էր քամին, կանգնել էր ջուրը, լոել ամեն ինչ:

որը արուր բայց զմանմանց ալիք մասնաւոց միաւուն ՎԻԼ քն մի խոճան ընամենին և . . . հաղթացայ վրժորման ոյլ

Ով չէ լսել «Լուր—դա—լուրը», որին չի դիմանալ ոչ մի բար սիրտը: Որին լսելով կը թրթւայ սիրող սիրտ, կը մարի: Որին լսելով կը գժւի սիրող աղջիկը, կը գժւի և դեպի սիրողը կը սլանայ:

Ոքանչելի է նա. երգերի փառքն է նա: Հրեշտակների մրմանցը, Հասօն սղին է նա . . .

Շարժւեցին ոչխարները, զլսրւեցին շատերը:

Շարժւեց և Հասօն, կուցաւ, տեսաւ բացւածքը:

Հասկացաւ ամեն ինչ, նայեց աղալին: Զգաց որ Զալիսէն կորած էր իր համար, ինքն էլ աշխարհի համար: Շարժւեց Զալիսէն էլ, նայեց աղալին, նայեց Հասօնին:

Զգաց որ Հասօն կորել էր իր համար, ինքն էլ աշխարհի համար:

Եւ լսեց ամեն ինչ . . .

«Լուր—դա—լուրը» կտրւեց, նրա խազի վերջին թռթուումը զնաց մեռնելու օդի մէջ... Յետոյ... լսեց մի ճիշ:

Ու երկու մարմիններ արագ պտղոյտ զոր-
ծելով օդի մէջ, գնացին միասին, ջախջախւե-
լու անդունդի խորքերում . . . և միմեանց
գրկում:

Հասօն և Զալլաշն Եին դրանիք . . .



անձարա սկսա՛ չե մաս ուրախա՞ ”
ունե՞ զի ո նախը միջա՞ ու բար՞
միջա՞ թէ եղա՞ ունե՞ վեղախչա ի մար՞
միօսա՞ սկսա՞ միջա՞ սկսա՞ ու բար՞
ունե՞ ո ի բար ունե՞ ու բար՞
ունե՞ մեղախչա ի մար՞



Յու կրթութեան առաջ ուսումնական
պահանջ այս մէջ պահպան մասին,
ու այսուհետեւ այս պահանջը առաջ ուսումնական
պահանջ այս մէջ պահպան մասին,

առաջ այս մէջ պահպան մասին

4568

Լ.030 ԵԵ ՏԵՍԵԼ ԵԿ ՊԱՀԵՍՈՒՄ ԿԱՆ

Կեանիքի գնով, Խերամի, թարգմ. սուսեբէնից . 2 կ.
 Աղղանշան, Վ., Գարշինի 2 կ.
 Հայր Միլոնը, Գիւղը-Մովասանի, թարգ. Փր. 2 կ.
 Հին-նոր Երդ ու Վերքերից, բանաստեղծութիւն-
 ներ Յ.և. Խառնակիսանի 3 կ.
 Ասոծուն թէ մամօնային, Լև Տոլստոյի, թարգ.
 ոռւս. Յով. Ստեփանեանի 3 կ.
 Անդոչ Հորթը, պատմուածք Սանտերի Ինդմանի
 թարգ. Յով. Ստեփանեանի. 2 կ.
 Լուր-Դա-Լուր, բրդական պօչմա Վ., Փափազեանի 3 կ.

0008626

2013

Կիմի՝ Եակу, Ռусսկій Տօրցո-պրոմաշլен. Եանկ,
 Յօսիֆ Յավելյան.

ՀՀ Ազգային գրադարան



NL0008616

